ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երեւան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ Հեռ. 091407836
Էլ. հասցե. sh.doydoyan@icloud.com
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

31.08.2020
346-17

Կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարար
Արայիկ Հարությունյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հարությունյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ ֆինանսական միջոցներով է իրականացվել հանրակրթության պետական առարկայական նոր չափորոշիչների մշակման գործընթացը (ՀՀ պետական բյուջե, միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցություն կամ այլ):
2. Եթե նոր չափորոշիչների մշակման գործընթացն իրագործվել է պետական բյուջեի միջոցներով, ապա, որքա՞ն գումար է հատկացվել պետական բյուջեից:
3. Եթե նոր չափորոշիչների մշակման գործընթացն իրականացվել է դրամաշնորհի շրջանակում, խնդրում ենք նշել դոնոր կազմակերպությունը(ները), ծրագրի(երի) անվանումը, տրամադրված գումարի չափն ու ծրագրի(երի) ակնկալվող արդյունքը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան